ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2024/109

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ապրիլի 2024 թ. N 109

ԵՐԵՎԱՆԻ ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Երևանի Ա. Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ» **ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Ազատության պողոտա 18

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024թ. ապրիլի 27-ին քննարկեց «Երևանի Ա. Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ» **ՊՈԱԿ-ի** (այսուհետ՝ քոլեջ, ՄՈւՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	**13** հունվարի 2023 թ.
Վերանայված ինքնավերլուծության ներկայացում	06 հունիսի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում	16-19 հոկտեմբերի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	**23** հունվարի 2024թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	22 փետրվարի 2024թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 2-ը՝ **«Կառավարում ու վարչարարություն»** և **«Որակի ներքին ապահովման համակարգ»,** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում

Ա. Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջն իր առաքելության համաձայն իրականացնում է երաժշտական ոլորտի 4 ՄԿԾ, որոնք իրենց կառուցվածքով, մոդուլների հաջորդականությամբ համապատասխանում են ՊԿՁ-ներին: Քոլեջի ներկայացուցիչները մասնակցություն են ունեցել 3 մասնագիտությունների ՊԿՁ-ների և մոդուլային ծրագրերի կազմմանը, որոնք փորձարկվել են քոլեջում: Քոլեջը նույն ուղղություններով իրականացնում է նաև կարճաժամկետ դասընթացներ: ՄՈՒՀ-ը բավականին մեծ ուշադրություն է դարձնում ուսանողների մոտ ստեղծագործական, կատարողական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Դասավանդման գործընթացում կիրառվում են տարաբնույթ մեթոդներ, որոնք նպաստում են ուսանողակենտրոն ուսուցմանը, առկա են դասավանդման և ուսումառության հաջողված փորձեր: Ուսանողներին տրամադրվում են ստեղծագործական բաղադրիչ պարունակող առաջադրանքներ: Ներդրվել են գնահատման որոշ գործիքներ: Հաշվի առնելով, որ ուսանողները ստանում են նաև դասավանդողի որակավորում և հնարավորություն ունեն աշխատելու երաժշտական և արվեստի դպրոցներում, ուսանողներն անցնում են նաև մանկավարժական պրակտիկաներ: Կրթական ծրագրերի իրականացումը նպաստում է ուսանողների մասնագիտական կարողությունների և վերջնարդյունքների ձևավորմանը, ուսումնառության գործընթացը նպաստում է մասնագիտական մտածողության զարգացմանը:

Քոլեջն ունի համապատասխան դասախոսական կազմ կրթական ծրագրերի նպատակների իրականացման համար: Ներդրված են ընտրության և համալրման մեխանիզմներ: Քոլեջն ապահում է պրակտիկ փորձառությամբ դասախոսների ներգրավվածությունը և դասախոսական կազմի կայունությունը, առկա են նաև երիտարդացման միտումներ: Գործում են դասախոսական կազմի գործունեության գնահատման որոշ մեխանիզմներ և առաջխաղացման հնարավորություններ: Քոլեջն

ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ կազմ հաստատության ռազմավարական նպատակների իրականացման համար:

Քոլեջում ձևավորված ուսումնական միջավայրը նպաստում է կրթական ծրագրերի իրականացմանը: Դրամական միջոցները բավարարում են ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար: Քոլեջը փորձում է ներգրավել որոշակի ֆինանսական այլընտրանքային աղբյուրներ, հաստատությունն օգտվում է նաև գործընկեր կազմակերպությունների և բարեգործների միջոցներից: Առկա են անվտանգ միջավայրի ապահովմանն ուղղված միջոցառումներ, ուշադրություն է դարձվում հատուկ կարիքներ ունեցող ուսանողների կրթության կազմակերպման առանձնահատկություններին: Ներդրված են ռեսուրսներից բավարվածության գնահատման որոշ մեխանիզմներ:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը***

Քոլեջի առաքելությունը, ՌԾ նպատակները և խնդիրները ընկալելի և ընդունելի են ներքին և արտաքին շահակիցների համար՝ կարևորելով քոլեջի դերը երաժշտական ոլորտի մասնագետների պատրաստման և համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով երաժշտական դպրոցները համալրելու հարցում: ՌԾ-ն ունի իրականացման պլան-ժամանակացույց: Քոլեջում ռազմավարական կառավարումն արդյունավետորեն չի իրականացվում, ներքին և արտաքին ռիսկերի կառավարման գործիքներ չեն գործարկվում, շահակիցների կարիքները չեն ամփոփվում և ներդրվում որոշումների կայացման հիմքում: Փոփոխությունների կառավարման համատեքստում քոլեջը կիրառում է իրավիճակային կառավարման մոդելը: Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն քոլեջի առաջնահերթություն հանդիսացող ոլորտների համաչափ զարգացման համար, իսկ որակի ապահովման համակարգի վերհանած տվյալները ևս հիմնականում չեն դրվում կառավարչական որոշումների կայացման հիմքում: Որակի կառավարման սկզբունքը պլանավորում-իրականացում շրջափուլում է, իսկ գնահատում-բարելավում շրջափուլը դեռևս ամփոփված չէ:

ՄՈՒՀ-ը ռազմավարական տարբեր շրջափուլերում, կարևորելով ՈՆԱ համակարգի ստեղծումը և բարելավումը, մշակել է ՈՆԱ գործընթացները համակարգող և կանոնակարգող փաստաթղթեր, ինչը հնարավորություն է տվել որոշակի հիմքեր ստեղծելու որակի ապահովման համակարգի ներդրման համար, այդուհանդերձ որակի ապահովման գործուն մեխանիզմներ և գործիքակազմ դեռևս չի ներդրվել: ՈՆԱ գործընթացներն ինստիտուցիոնալ մակարդակում կանոնակարգված չեն: Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման համար կիրառվող գործիքները արդյունավետ չեն, վերհանված կարիքները չեն ամփոփվում և հիմք չեն դառնում գործընթացների հետագա բարելավման համար: Ներքին շահակիցները որոշ չափով ընգրկված են ՈԱ գործընթացներում, սակայն արտաքին շահակիցների ներգրավվածությունը դեռևս տեսանելի չէ: Քոլեջի որակի ապահովման ներքին համակարգի գործունեությունը դեռևս չի նպաստում քոլեջում ընթացող բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և չի ապահովում քոլեջի գործունեության մասին տեղեկատվության թափանցիկությունը:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը***

Քոլեջում գործում են ուսանողների ընտրության և ընդունելության կանոնակարգված մեխանիզմներ, առկա է դիմորդների կայուն հոսք: Քոլեջի կրթական ծրագրերը պահանջում են անհատական մոտեցում

յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ, ինչը հնարավորություն է տրվում ուսանողներին ընտրելու իրենց անհատական դասընթացների դասախոսներին:

Ուսանողների կրթական կարիքները գտնվում են քոլեջի ուշադրության կենտրոնում, ուսանողներին տրամադրվում են համապատասխան աջակցություն ու խորհրդատվություններ: Առկա է ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին, գործում են կարիերային նպաստող ծառայություններ: Գործում են ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման որոշ մեխանիզմներ:

Քոլեջը մշակել է հետազոտության, ստեղծագործական և վերլուծական աշխատանքների իրականացման քաղաքականություն, փորձել է սահմանել հետազոտության իրականացման սկզբունքները երաժշտության ոլորտում; Ուսանողներին տրվող առաջադրանքներն ունեն ստեղծագործական-վերլուծական բաղադրիչ, առկա են ստեղծագործական միջավայրի ձևավորման և տարածման մեխանիզմներ: Քոլեջի դասախոսներն ունեն տպագրված հոդվածներ, զեկուցումներ, նրանց ուսումնական ձեռնարկները կիրառվում են մասնագիտական մոդուլներում, մեթոդական ուղեցույցները՝ ուսումնառության պրոցեսում; Հետազոտական գործընթացի և ուսումնառության կապն արտահայտված է ուսանողներին տրվող առաջադրանքներում:

Քոլեջում առկա է հաշվետվողականության համակարգ: Քոլեջն ապահովում է հաշվետվողականությունը պետության և հասարակության առաջ, փորձում է կատարելագործել իրականացվող գործընթացների թափանցիկության ապահովման մեխանիզմները: Առկա են հասարակության հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմեր: Հասարակական պատասխանատվությունը կարևորված է հաստատության կողմից: Քոլեջում հասարակությանը գիտելիքի և արժեքների փոխանցման համար իրականացվում են կարճաժամկետ վճարովի դասընթացներ:

Քոլեջն արտաքին կապերի զարգացումն ու միջազգայնացումը համարում է ռազմավարական առաջնահերթություն: Մուտը, համագործակցելով ազգային և միջազգային գործընկերների հետ, պարբերաբար կազմակերպում և մասնակցում է միջազգային միջոցառումների, մրցույթ-փառատոնների, մրցույթներին ակտիվ մասնակցության ունեն նաև ուսանողները: Միջազգային մրցույթների շրջանակներում ՄՈՒՀ-ը համագործակցում է միջազգային քոլեջների հետ: Երաժշտական դպրոցների, նմանատիպ ՄԿՈ-ների հաստատությունների հետ ձևավորել է համագործակցային միջավայր և փորձի փոխանակման մշակույթ, վերջին տարիներին ընդլայնել է նաև միջազգային գործընկերային ցանցը:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում ու վարչարարություն»** և **«Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - ՌԾ կատարողականի գնահատմանը՝ հաշվի առնելով սահմանված ցուցիչները, և գնահատման արդյունքները ռազմավարական պլանավորման հիմքում դնելու անհրաժեշտությանը,
   - պլանավորման գործընթացներին սահմանված ցուցիչների փոխկապակցմանը,
   - դասավանդման մեթոդ-գնահատման մեթոդ-վերջնարդյունք կապի հստակեցմանը,
   - համանման լավագույն փորձի ուսումնասիրության և փորձի տեղայնացման մեխանիզմների ներդրմանը,
   - հետազոտական-ստեղծագործական բաղադրիչ պարունակող առաջադրանքները կրթական ծրագրերի պարտադիր բաղադրիչ դարձնելու անհրաժեշտությանը,
   - հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի շեշտադրմանը,
   - պրակտիկաների իրականացման գործընկերային շրջանակի ընդլայնմանը:
4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2024 թ. ապրիլի 27
ք.Երևան